# ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

**ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ, Ազատագրական պայքարի ուղիներում, I-V գրքեր, Եր., 2003-2013 թթ., ընդհանուր ծավալը 5208 էջ:**

Ավարտվեց հայոց պատմության ամենաբարդ ու դրամատիկ ժամանակահատվածներից մեկի՝ 1903-1914 թթ. մանրակրկիտ լուսաբանմանը նվիրված ականավոր պատմաբան, ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» հինգ գրքից բաղկացած մեծարժեք աշխատությունը: Առաջին գրքում հեղինակը քննարկել է Առաջին համաշխարհային պատերազմին նախորդած տարիներին հայ իրականության մեջ տեղի ունեցած իրադարձությունները՝ ի մասնավորի 1905 թ. հունվարից 1906 թ. օգոստոս ժամանակահատվածը: Փաստորեն, այս գիրքը պարունակում է ընդամենը մեկուկես տարվա պատմական իրադարձությունների, առանցքային դեր խաղացած դեմքերի ու դեպքերի մանրազնին ուսումնասիրության և գիտական հանգամանալից վերլուծության արդյունքները: Նրանում արխիվային փաստաթղթերի և սկզբնաղբյուրային ամենատարբեր նյութերի հիման վրա գիտական բարձր մակարդակով քննարկվում են 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությանն առնչվող իրադարձությունները, որոնք, ինքնին հասկանալի է, չէին կարող շրջանցել կովկասահայության, այսինքն՝ ողջ արևելահայության մղած կենաց և մահու ազատագրական պայքարը կովկասյան թաթարների դեմ, հայ-վրացական հակամարտությունը, վրաց ղեկավարների հակահայկական ձեռնարկումները, հայկական ջարդերն ու կոտորածները և առանձին վրացիների և կովկասյան թաթարների ցուցաբերած օգնությունն ազգամիջյան հակամարտություններից տառապող հայերին: Բացահայտվում են նաև ցարական չինովնիկների հակահայ գործողությունները, նրանց գործադրած ջանքերը՝ ազգամիջյան ընդհարումների միջոցով խանգարել ռուսական հեղափոխության ալիքի տարածմանը Կովկասում: Մանրամասն ներկայացվում է Կովկասի հայաբնակ վայրերի ինքնապաշտպանական մարտերի կազմակերպումը, հետահայաց անդրադարձ է կատարվում 1903 թ., ապա 1904 թ. իրադարձություններին, որոնք շարունակվեցին հետագա տարիներին: Ուշագրավ է այն փաստը, որ 1905 թ. մարտի կեսերին ՀՅԴ Բաքվի կոմիտեն հայտարարություն է տարածում, որ տեղի ունեցած կոտորածներին աջակցելու մեղադրանքով մահվան են դատապարտված նահանգապետ Նակաշիձեն, ոստիկանապետ Դեմինսկին, պրիստավ Մամեդբեկովը, նրա օգնական Սուլթանովը, թաղային վերակացուներ Միքելաձեն ու Շահթախտինսկին: ՀՅԴ կոմիտեն այդ անձանց ուղարկում է իր դատավճիռները՝ հայտնելով, որ երկու ամսվա ընթացքում դրանք ի կատար են ածվելու: Նշվածներից բացի՝ ահաբեկվեցին բազմաթիվ այլ պաշտոնյաներ՝ ոստիկանապետեր, ոստիկաններ, լրտեսներ: Այդ և համանման մյուս գործողություններն ստիպեցին ցարական արքունիքին

փոխելու քաղաքականությունը հայերի նկատմամբ, իսկ ռուս մտավորականության ներկայացուցիչները շեշտեցին ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմներում հայության բերած նպաստը, մանավանդ հայազգի զորավարների՝ Լորիս-Մելիքովի, Արղությանի, Տեր-Ղուկասովի, Մադաթովի, Լազարևի և այլոց մատուցած ծառայությունները ռուսական պետությանը: Հեղինակն անառարկելի փաստերով ցույց է տալիս, թե ինչպես նույնիսկ հայ բուրժուազիայի ներկայացուցիչ Կ. Խատիսյանը պահանջում է Ռուսաստանի կազմում գտնվող ժողովուրդների ազգային հավասարություն, որին ռուսական կողմը հակադարձում է, որ դա անիրագործելի խնդիր է, քանի որ կայսրության օրենքների հիմքը ազգային և սոցիալական անհավասարությունն է: Այնուհանդերձ, Կովկասի փոխարքան (Վորոնցով-Դաշկովը) «անարդար և քիչ նպատակահարմար» է համարում հայ եկեղեցու գույքի բռնագրավումը: Նիկոլայ II-ին հղած նամակում նա ընդգծում է հազարամյակների պատմություն ունեցող ժողովրդին ապազգայնացնելու քաղաքականության անհեթեթությունը և հայ եկեղեցու կալվածքները հայությանը վերադարձնելու անհրաժեշտությունը: Նիկոլայ II-ը լիովին ընդունեց բերված համոզիչ փաստարկները և 1905 թ. օգոստոսի 1-ին չեղյալ հայտարարեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Հեղինակը, գնահատելով այդ իրողությունը, իրավացիորեն եզրակացնում է, որ սա պատմական այն հազվագյուտ դեպքերից է, երբ «ինքնակալն ընդունում էր իր իսկ ձեռքով գործած սխալը» (I h., էջ 302): Միևնույն ժամանակ ընդգծվում է, որ ցարի այդ զիջումն արդյունք էր ամբողջ հայության, մասնավորապես՝ ազգային կուսակցությունների, ՀՅԴ-ի և հնչակյանների, ինչպես նաև հայ եկեղեցու համատեղ գործունեության: Գրքում հանգամանալից քննարկվում են թուրք-հայկական ընդհարումների սաստկացումը, կոտորածների երկրորդ փուլը Երևանի, Բաքվի, Գանձակի նահանգներում, Շուշիի ահավոր կոտորածների հրահրումը, տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերը, դրանց տեղափոխումը Խաչեն, Վարանդա, Դիզակ: Իսկ որ շատ կարևոր է, այդ վերլուծությունը հեղինակը կատարում է ՀՀ ազգային արխիվում պահպանվող մեծարժեք անտիպ նյութերի, ականատեսների վկայությունների հիման վրա, որը, անշուշտ, գիտնականի հարցադրումները դարձնում է միանգամայն համոզիչ ու անառարկելի:

Աշխատության մեծագույն արժանիքներից է այն, որ հեղինակը քննարկում և վերլուծում է ամբողջ Հայաշխարհի իրադարձությունները. Անդրկովկասը՝ Արևելյան Հայաստան, Վրաստան, Բաքվի նահանգ, դրանց զուգահեռ՝ Օսմանյան կայսրության թուրքական դժոխքում, ողջ Արևմտյան Հայաստանում կատարվող ողբերգությունները: Սասունի ապստամբության պարտությունից հետո մանրամասն քննարկվում և գնահատվում են «դիմադրական պայքարի անհատնում օրինակները»: Տարոնը (Դուրան-Բարձրավանդակ), Մշո դաշտն իր բազմաթիվ գյուղերով, Վասպուրականը, Կիլիկիան. բոլոր վայրերում գործում էին ազգային կուսակցությունները և ղեկավարում ժողովրդական շարժումը: Այդ ծանր օրերին արևմտահայությանն օգնության է շտապում կովկասահայությունը, առանձնապես արցախահայությունը: Աշխատության մի ենթագլուխ նվիր-

ված է «Ղարաբաղցի հեղափոխականի ֆենոմենին»:

Խաղաղ չէր կյանքը նաև կովկասահայ իրականության մեջ: Չէին դադարում թուրք-թաթարական սադրանքները, դրան զուգահեռ՝ ցարիզմի կողմից ազգամիջյան ընդհարումների կազմակերպումը: Հեղափոխությունն իսպառ ոչնչացնելու նպատակով պետական ապարատը որոշեց «օրենսդրական դումա» հրավիրել: Ըստ ընտրական օրենքի՝ բնակչության մեծ մասը զրկված էր ընտրելու իրավունքից, չնայած դրան՝ ժողովուրդը լուրջ հույսեր էր կապում Պետական դումայի հետ: 1906 թ. ապրիլի վերջին բացված Պետական դուման չարդարացրեց կայսրության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների հույսերը. կառավարությանն ուղղած մեղադրանքով հանդես եկան և՛ հայերը, և՛ կովկասյան թուրքերը: Դուման չարդարացրեց նաև ժողովրդին խաբելու ցարիզմի հույսերը, և 1906 թ. հուլիսի 9-ի ցարի հրամանով այն ցրվեց: Հեղափոխական ալիքը չշրջանցեց նաև հայության ամենաավանդական հոգևոր հաստատությունը՝ հայոց եկեղեցին: Ժամանակակիցները, չժխտելով հայ եկեղեցու մեծ դերը հայկական պետականության կայացման և պահպանման գործում, տարբեր վերաբերմունք էին ցուցաբերում նրա նկատմամբ: Աշխատության հեղինակը մանրամասն քննարկում է այդ տեսակետները՝ իր վերաբերմունքն արտահայտելով դրանց նկատմամբ, առավել ընդգծելով ազգային կուսակցությունների (ՀՅԴ-ի և հնչակյանների) արմատական վերաբերմունքը: Ճիշտ է, ամբողջ հայությունն այդ կուսակցությունների գլխավորությամբ ոտքի ելավ պաշտպանելու հայ եկեղեցու իրավունքները 1903 թ. հունիսի 12-ի օրենքից՝ եկեղեցին համարելով հայության ազգային ինքնության խորհրդանիշ: Պայքարի արդյունքը եղավ ցարական կառավարության վերը նշված զիջումը: Ելնելով ստեղծված պատմական նոր պայմաններից՝ ՀՅԴ-ն դիմեց Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանին՝ պահանջելով բարենորոգումներ կատարել հայ եկեղեցու ներսում: Վերջինիս հատուկ կոնդակով 1906 թ. օգոստոսի 17-ին կայացավ էջմիածնի կենտրոնական ժողովը, որտեղ գործուն դեր էր խաղում ՀՅԴ-ն: Սակայն նույնիսկ այդ կուսակցության ներսում լուրջ տարաձայնություններ կային հայ եկեղեցու գնահատության հարցում. նրանց մի մասը գտնում էր, որ Մ. Խրիմյանի կաթողիկոսության 13 տարիները աղետաբեր են եղել հայության համար, մյուս մասը ժողովի նախագահ Սիմոն Զավարյանի շուրթերով հայտարարում էր. «Խրիմյանի ողջ կյանքն իր ժողովրդին նվիրված լինելու օրինակ է, իսկ նրան հակաժողովրդական որակելը՝ սրբապղծություն»: Այս ժողովի մասին գրվել են տարբեր հոդվածներ, նույնիսկ պաշտպանվել են ատենախոսություններ: Այս աշխատության մեջ դրա քննարկումը և վերլուծությունն ընթանում է այլ հունով ու այլ խորությամբ:

Ժողովում կրքոտ վիճաբանություններ են տեղի ունենում հատկապես դպրոցական կյանքի կազմակերպման և ուսումնական խնդիրների շուրջ: Նույնիսկ այսօր՝ 100 տարվա հեռավորությունից, ընթերցողին զարմանք են պատճառում ժամանակի գործիչներից ոմանց առաջադրած պահանջները. «Միջնակարգ դպրոցներում ավանդել վրաց և թուրքաց գրականություն», իսկ եթե դպրոցի բյուջեն հնարավորություն ունենա, իբրև ոչ պար-

տադիր առարկա ավանդել «վրաց և թուրքաց լեզուներ»: Կրքոտ վիճաբանությունները քաղաքական-հասարակական, պետական-կալվածական, վարչական-ընտրողական հարցերի վերաբերյալ զայրացրին կառավարական պաշտոնյաներին, և օգոստոսի 30-ին Թիֆլիսից հրահանգ ստացվեց կենտրոնական ժողովը փակելու մասին:

Երկրորդ գրքում լուսաբանվում են 1906 թ. օգոստոսից մինչև 1907 թ. հուլիս ընկած ժամանակահատվածում հայ իրականության մեջ ընթացող իրադարձությունները, այդ թվում՝ դեռ շարունակվող թուրք-հայկական ընդհարումները Երևանում, Սուրմալուի գավառում, Զանգեզուրում, Շուշիում և ամբողջ Ղարաբաղում: Հեղինակը շրջանառության մեջ է դրել նոր փաստեր նույնիսկ հանրահայտ դեպքերի վերաբերյալ: Քննարկվում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի՝ Նիկոլայ II-ին ուղղած հաշվետվությունը: Մինչ այդ ռուս բարձրաստիճան պաշտոնյաները հայ-թուրքական ընդհարումների մեղավոր համարում էին հայերին: Վորոնցով-Դաշկովն առաջինն էր (գուցե և միակը), որ կոտորածների հիմնական մեղավոր համարում էր կովկասյան թուրքերին, որոնց սատարում էր ցարական նախկին վարչախումբը: Փոխարքայի արդարամիտ գնահատականին համամիտ էր նաև նրա ոստիկանապետ Շիրինկինը, որը համարձակորեն քննադատության էր ենթարկում ցարական բյուրոկրատիայի հայահալած քաղաքականությունը: Պետերբուրգի հետադիմական մամուլը մեղադրում էր փոխարքային գոլիցինյան «կարգ ու կանոնը» խախտելու համար: Սակայն կառավարության մեջ աստիճանաբար ավելանում էր այն պաշտոնյաների թիվը, որոնց կարծիքով, հայ տարրի թուլացումը Կովկասում չէր բխում ռուսական պետության շահերից:

Այդ ընթացքում ալեբախումներ էին ընթանում հայ ազգային կուսակցությունների միջև: Աշխատության հեղինակն արխիվային փաստաթղթերի, ժամանակի մամուլի բազմաթիվ օրգանների հրապարակած նյութերի հանգամանալից վերլուծությամբ բացահայտում է հին «Հնչակում» տեղի ունեցած իրադարձությունները և դրանց աստիճանական հաղթահարումը: Մանրակրկիտ քննարկված են նաև «վերակազմյալ» հնչակյանների ծանր փորձությունները, ներկուսակցական խմբավորումների անզիջում պայքարը, որի արդյունքում կուսակցությունը բաժանվեց առճակատող երկու թևերի, որն էլ դրա քայքայման սկիզբն էր:

Ծանր փորձություններ էին սկսվել նաև ՀՅԴ շարքերում, որտեղ առաջացել էին ընդդիմադիր խմբավորումներ: Խորաթափանց գիտնականի պատասխանատվությամբ հեղինակը քննարկում է «Կովկասյան նախագիծը», վերլուծում անջատականների, միհրանականների, արևմտահայ հայդուկների շարքերում առաջացած հակասությունները: Այդ ժամանակահատվածում առաջացավ սոցիալ-դեմոկրատական հայ բանվորական կուսակցությունը: Աշխատության հեղինակը վերլուծում է նրա ծրագիրն ու գաղափարախոսությունը, ներկայացնում նրանց փոխհարաբերությունները մի կողմից հայ բոլշևիկների, իսկ մյուս կողմից ազգային կուսակցությունների հետ: Փաստորեն, հեղինակն արտակարգ խորությամբ բացահայտել, ներկայացրել և գնահատել է այդ ժամանակահատվածի հայ հասարակական-քաղաքական կյանքում ընթացող բոլոր իրողությունները:

Այդ հենքի վրա վերլուծված են Հայկական հարցի բոլոր վայրիվերումները. հակաթուրքական ապստամբություն բարձրացնելու նպատակահարմարության հարցը: Հուզիչ է «Ֆիդայական շարժման մայրամուտը» ենթագլուխը, որտեղ քննարկված են ժողովրդական շարժման հետ կապված շատ հարցեր, նաև մեծ հայդուկապետի՝ Գևորգ Չաուշի վերջին կռիվն ու նահատակությունը: Այս գրքում քննարկված են ամբողջ Հայաշխարհում կատարվող իրադարձությունները՝ թուրք-քրդական հարստահարությունների սաստկացում, դրան ի պատասխան՝ եվրոպական հայասերների գործադրած ճիգերը, ժողովրդին զինելու մարտավարության ընդունումը, ժողովրդական բանակ ստեղծելու անհրաժեշտությունը, Բուլղարիայում հայ զինվորական դպրոց բացելու նախապատրաստական աշխատանքներն ու բացումը: Գնահատված է զինվորական դպրոցի օգտակար գործունեությունը, որն իր կարճատև գոյության ընթացքում մեծ դեր խաղաց՝ տալով անհրաժեշտ զինվորական կադրեր: Արևմտահայությանը հուզող բազմաթիվ խնդիրներին զուգահեռ՝ քննարկվում են նաև այդ ընթացքում ռուսահայությանն ու պարսկահայությանը տագնապեցնող բազմաթիվ հարցեր: Վերլուծվում են ՀՅԴ-ի «Կովկասյան նախագծի» և կուսակցության ծրագրի համապատասխանության խնդիրները, կուսակցության պառակտման իրական վտանգներն ու դրանց հաղթահարումը:

Աշխատության հետաքրքիր բաժիններից մեկը Պարսկաստանին վերաբերող գլուխն է՝ «Պարսկական հեղափոխության սկզբնավորումը»: Շատ լավ են բացահայտված ռուսական հեղափոխության ազդեցությունը հարևան երկրների վրա, ժողովրդական շարժման առաջին քայլերը Պարսկաստանում, քաղաքացիական իրավունքների աստիճանական վերականգնումը, առաջին Սահմանադրության հռչակումը և մեջլիսի հրավիրումը: Այդ ընթացքում սկսվում է Թուրքիայի ագրեսիան Իրանի դեմ, որի ժամանակ դրսևորվում է նաև պարսկահայերի դիրքորոշումը: Հատորն ավարտվում է Օսմանյան կայսրության թուրք բնակչության մեջ սկզբնավորված հակասուլթանական տրամադրությունների վերլուծությամբ:

III գիրքն ընդգրկում է ավելի կարճ ժամանակահատված՝ 1907 թ. հուլիսից 1908 թ. ապրիլ: Այնտեղ քննարկված են կովկասահայության կենսատարածքում բախտորոշ նշանակություն ունեցող դեպքերն ու դեմքերը՝ երկրորդ Պետական դումայի ցրումը, հայ ազգային ու սոցիալիստական կուսակցությունների կացությունը, ստոլիպինյան ռեակցիան և ցարական կառավարության հակահայ դիրքորոշման ուժգնացումը, Ստոլիպին-Վորոնցով-Դաշկով հակադրությունների սրումը, երրորդ Պետական դումայի հրավիրումը, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի մահը:

Գրքում քննարկվում են նաև Թուրքիայում կատարվող այն իրադարձությունները, որոնք առնչվում են արևմտահայ հասարակական կյանքի բոլոր վայրիվերումներին: Արևմտահայության հասարակական, հանրային կյանքում բախտորոշ էր երիտթուրքական տարրերին համակած հակասուլթանական շարժումը: Այդ համապատկերի վրա քննարկվում են օսմանյան ընդդիմադիր ուժերի առաջին համագումարի ընթացքը և երիտթուրքերի հետ հայ ազգային կուսակցությունների տարբեր գործելակերպը. եթե

հնչակյանները մերժում էին երիտթուրքերի հետ համագործակցելու գաղափարը, ապա ՀՅԴ-ն՝ ընդհակառակը: Այս հողի վրա հայ ազգային ուժերը պառակտվում են:

Այնուհետև հեղինակն անդրադառնում է պարսկական սահմանադրական շարժմանը, շահի և մեջլիսի միջև ընթացող առճակատումներին, թուրք-պարսկական ընդհարումներին, մեջլիսը ցրելու գործում միապետականների տարած հաղթանակներին, տեղի հայության մասնակցությանը Ատրպատականի և Թավրիզի գոյամարտերին:

Մյուս գլուխը նվիրված է օսմանյան հեղափոխության և հայերի կացության խնդիրների մեկնաբանմանը: Ներկայացված են Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության նախապատմությունը և ստեղծումը, «Իթթիհադի» անհանդուրժողականության դրսևորումները, Արևելյան հարցը և հայկական բարենորոգումների խնդիրը վերացնելու պահանջներն ու պայքարն այդ ուղղությամբ: 1908 և 1909 թթ. արևմտահայ կյանքը և Թուրքիայում ընթացող վայրիվերումները քննարկված, վերլուծված և գնահատված են փորձառու պատմաբանի հմտությամբ: Մասնավորապես, հանգամանորեն վերլուծված են օսմանյան պառլամենտի ընտրությունները և գործունեության ընթացքը, հայոց զինվորագրության հարցի արծարծումը, թուրքական առաջատար կուսակցությունների՝ «Իթթիհադի» և «Ահրարի» պայքարը, որը տեղիք տվեց հպատակ ժողովուրդների հույսերի կորստյան և մեծ հիասթափության: Պայքարի շարունակությունը և արդյունքը աբդուլհամիդյան զինված հեղաշրջման փորձն էր, որը վերջացավ մեծ զոհերի գնով՝ կարմիր սուլթանի պարտությամբ:

Աշխատության IV գրքում քննարկվում են 1909-1911 թթ. Հայաշխարհի իրադարձությունները: Այն սկսվում է Կիլիկիայի 1909 թ. մեծ աղետի վերլուծությամբ: Այդ թեմային հեղինակը նվիրել է մեծ աշխատություն՝ «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում»՝ այդ ողբերգության 100-ամյակի առիթով, ուստի հանգամանալից քննություն չի կատարում, այլ բավարարվում է համառոտ շարադրանքով՝ պահպանելով դեպքերի ընթացքն ու տրամաբանությունը:

Գրքում բարձր մակարդակով է քննարկված նաև արտագաղթի խնդիրը. հարց էր դրվում գաղթել ազգովի և ստեղծել նոր հայրենիք: Հեղինակի իրավացի կարծիքով, Թուրքիայում (Արևմտյան Հայաստանում) արտագաղթը ֆիզիկական գոյության խնդիր էր, իսկ այսօր դա սոցիալական հարց է: Չնայած ազգային որոշ գործիչներ համամիտ էին արտագաղթին, հայ մամուլի օրգանները ժողովրդին կոչ էին անում «մնալ իր հողի վրա», քանի որ «առանց հայի չկա Հայաստան»: Քննարկված է նաև Օսմանյան կայսրության ոչ մուսուլման (քրիստոնյա) հպատակների զինվորագրության խնդիրը: Տեղի հայերը, քրիստոնյա մյուս ժողովուրդները բարձրացնում էին իրենց զինվորագրության խնդիրը, իսկ մուսուլմանները՝ թուրքերը և քուրդ աշիրեթները, դեմ էին այդ խնդրի կարգավորմանը, որովհետև, ըստ իսլամի, գյավուրը (անհավատը) զենք կրելու իրավունք չունի: Այդ հարցը բավարար լուծում չստացավ՝ փաստելով, որ Թուրքիան քաղաքակիրթ պետություն դառնալու համար դեռ երկար ճանապարհ պիտի անցնի:

Աշխատության XX և XXI գլուխներում քննարկված են պարսկական հեղափոխության ալեբախումները, ինչպես նաև հայ հեղափոխականների և ռազմական մասնագետների գործունեության դրական հետևանքները: ՀՅԴ-ն որոշեց մասնակցել պարսկական հեղափոխությանը և զինված խմբեր մտցրեց Ատրպատական: Դա արվում էր գոյությունը վտանգած պարսկահայերին օգնելու նպատակով: Թշնամի երկու կողմերը՝ և՛ միապետականները, և՛ հեղափոխականները, պահանջում էին հայերի օգնությունը: Թավրիզի և Ատրպատականի հայությունը չէր ուզում Թուրքիայի և Անդրկովկասի հայության նման կորուստներ տալ: Բազմաթիվ հարցեր են քննարկվում Պարսկաստանին, նրա ռազմաքաղաքական իրադրությանը նվիրված գլուխներում: Գիտական անկողմնակալ վերլուծությամբ բացահայտելով պարսկական հեղափոխության պարտության պատճառները, հեղինակն այնուհետև կատարում է գիտական, պատմական, կրոնափիլիսոփայական հետաքրքիր բացահայտումներ: XXII և XXIII գլուխները վերաբերում են Արևմտյան Հայաստանին, Օսմանյան կայսրության հակասական զարգացումներին, «Իթթիհադի» և «Իթթիլաֆի» գործունեությանը, ինչպես նաև Կիլիկիայի զանգվածային կոտորածներից հետո երիտթուրքերի հետ ՀՅԴ գործակցության շարունակությանը: Դեպքերի զարգացումներով հարուստ է XXII գլուխը, որտեղ քննարկված հարցերը վերաբերում են Կ. Պոլսի պատրիարքի անընդհատ հրաժարականներին և դրանց պատճառներին, հայ ազգային կուսակցությունների, մասնավորապես ՀՅԴ-ի՝ հայոց եկեղեցու նկատմամբ դրսևորած անպատշաճ վերաբերմունքին, այդ պատճառով տեղի հայության պառակտումներին: Բազմաթիվ փաստերով հեղինակը ցույց է տալիս երիտթուրքերի և սուլթանի կողմնակիցների գործունեության և գաղափարների նույնությունը, երիտթուրքերի հակահայ գործունեության ավելի ուժգնացումը, «Իթթիլաֆի» հակասությունները «Իթթիհադի» հետ, ապա՝ վերջիններիս իշխանության գլուխ անցնելը: Մինչ այդ «Իթթիհադի» հետ իր կապերը խզած ՀՅԴ-ն խոստովանեց իր «մեծ սխալը» և քայլեր կատարեց արևմտահայության պաշտպանության ուղղությամբ: Բայց դա այլևս հնարավոր չէր... «գնացքն անցել էր»: Աշխատության վերջին գլուխը թեև ծավալով համեմատաբար փոքր է (ընդամենը 50 էջ), բայց ունի հարուստ բովանդակություն: Հեղինակն անհերքելի փաստերով ցույց է տալիս, որ եթե մինչև այդ հնչակյանները ամենայն սրությամբ քննադատում էին ՀՅԴ-ին երիտթուրքերի հետ համագործակցելու համար, ապա այս անգամ իրենք համախմբվեցին «Իթթիլաֆի» շուրջը: Այս ընթացքում անելանելի վիճակ է ստեղծվում Արևմտյան Հայաստանում: 1912 թ. գարնանը վերսկսվում են Արևմտյան Հայաստանի գավառների հայության ջարդերը: Չնայած Կ. Պոլսի Հայոց պատրիարք Արշարունու և Կեդրոնական վարչության բողոքներին՝ կառավարությունը որևէ քայլ չի ձեռնարկում արևմտահայության փրկության համար: Իրական փրկությունը զինվելն էր, որն անհնար էր դարձել ազգային կուսակցությունների «օրինապահ» գործողությունների պատճառով: Հայությունը նմանվում էր անղեկ, անառագաստ նավի՝ փոթորկված օվկիանոսում: Այդ իրադրության բացահայտումով ավարտվում է աշխատության IV գիրքը:

Ուշագրավ է, որ աշխատության I և II գրքերում վերնագրից անմիջապես հետո գրված է՝ «Չորս գրքով», սակայն շարադրանքի ընթացքում հեղինակն արդեն զգացել է, որ 4 գրքով այն չի ավարտելու, ուստի III և IV գրքերում այլևս չի նշված դրանց թիվը:

Աշխատության V գիրքն ամենից ստվարածավալն է (1296 էջ) և ընդգրկում է 1912 թ. հոկտեմբերից 1914 թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածը: Հատորի ամբողջ բովանդակությունը նվիրված է Հայկական հարցին, նրա զարգացման տարբեր փուլերին: Քննարկվում և մեկնաբանվում են 1912 թ. աշնանն սկսված Բալկանյան ժողովուրդների պատերազմական գործողությունները Թուրքիայի դեմ, թուրքական զորքերի կրած պարտությունները, արևմտահայության և արևելահայության լայն շրջաններում Հայկական հարցը բարձրացնելու խնդիրը: Բացահայտվում է թուրք և ռուս պետական գործիչների վերաբերմունքը Հայկական հարցը Եվրոպայում օրակարգ մտցնելուն, գնահատվում են եվրոպական հայասիրական կոմիտեների ստեղծումը և դրանց գործունեությունը: Միաժամանակ անդրադարձ է կատարվում Եվրոպայի հայատյացների գործունեությանն ու թուրք-քրդական նոր վայրագություններին: Այդ ժամանակահատվածում են առաջանում հայկական բարենորոգումների տարբեր ծրագրերը, որոնց հիմքի վրա ստեղծվում է միասնական ծրագիրը: Հանգամանալից են այս հատորում հայկական բարենորոգումների խնդրին վերաբերող տարբեր պետությունների վերաբերմունքի ու ծրագրերի քննարկումները՝ Մեծ Բրիտանիայի և Իտալիայի խորհրդարաններ, ցարական կառավարություն և բարենորոգումների նախապատրաստական աշխատանքներ, մեծ տերությունների հակասական վերաբերմունքը, ռուս-գերմանական հակասությունները: Գրքի ամեն մի գլուխը կարող էր լինել մի առանձին աշխատություն: Այդ բոլորի շարադրանքն ապացուցում է մեծ պետությունների «հավերժական շահերի» հորձանուտում հին քաղաքակրթության և մշակույթի տեր ժողովրդի բնաջնջման ծրագրերի նախապատրաստումը: Գրքում բարձրացված բոլոր հարցերը հնարավոր չէ մեկ առ մեկ ներկայացնել:

1905-1914 թթ. ժամանակահատվածը մեր ժողովրդի համար ունեցավ ճակատագրական նշանակություն: Ամեն անգամ, երբ թվում էր, որ բացված է մեր ժողովրդի փրկության ճանապարհը, կորստյան տագնապը հնչում էր ամենուր: Աշխատությունն ավարտվում է հուզիչ ամփոփումով: Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից՝ երիտթուրքական կառավարությունը «որոշեց օրակարգից ընդմիշտ ջնջել Հայկական հարցը՝ կատարելով մարդկային պատմության մեջ եզակի հանցագործություններից մեկը... Թուրքն ու քուրդը տեր դարձան հայ ժողովրդի հայրենիքին» (էջ 1102): Առաջին հայացքից թվում է, թե այս եզրակացությունը խիստ հուսահատական է, բայց երբ խորհում ես, որ այս մեծարժեք աշխատության հեղինակը այդ բնաջնջված ժողովրդի վերընձյուղված մի շառավիղն է, երբ մտորում ես, որ արդեն 20 տարի գոյություն ունի պատմական Արցախի անկախ հանրապետությունը, համակվում ես հույսով և հավատով, որ պատմությունը լի է անակնկալներով...

Գրախոսվող աշխատության բոլոր գրքերն ունեն անձնանունների և տեղանունների ցանկ: հեղինակը մասնավորապես օգտագործել է ահռելի քանակությամբ արխիվային փաստաթղթեր, որոնք քաղել է ՀՀ ազգային, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի, Մատենադարանի, Ռուսաստանի կայսրության արտաքին քաղաքականության, Ռուսաստանի պատմական, Ռուսաստանի ռազմապատմական, Վրաստանի արխիվներից: Հնարավոր չէ թվարկել ֆոնդերը, տպագիր և ձեռագիր սկզբնաղբյուրները, գիտական աշխատությունների հսկա ցանկը (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն): Հարուստ է նաև օգտագործված պարբերական մամուլի ցուցակը (հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն): Հարգանքի է արժանի մեկ այլ հանգամանք ևս. հեղինակը կազմել և ընթերցողին է մատուցել Հայաստանի բարենորոգումների մասին ժամանակի հայ մամուլում լույս տեսած ուշագրավ այն հոդվածների ցանկը, որոնք ինքը չի օգտագործել. դրանք նախատեսված են ապագա հետազոտողի համար:

Ակադեմիկոս Հր. Սիմոնյանը ստեղծել է **եզակի, կոթողային աշխատություն**, որն իրավամբ արժանացել է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի:

***ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ***